

նկու ձևը և առհասարակ դպրոցի բոլոր սարգ ու կարգը բոլորովին նման էր մեր հին դպրոցներին, ես մօտեցայ հարց ու փորձ արի, խօսեցի եւրոպական դասաւանդութեան եղանակի մասին, բայց մոլլան իմ ամեն մի հարցմունքիս միայն քմիծաղ պատասխանում էր՝ «Աբի, սարքարամ, խոր միգույիգ, ամ մա ալբիգար նամիֆարմայագ» — այո՛, պարոն, լաւ էք ասում, բայց գիրքը (դուրանը) չէ հրամայում, նոյն պատասխանը յետոյ ես լսեցի Գանձակի գըլխաւոր մուլլայից, երբ ես այցելեցի այն տեղի մեգրեսէն և մի գիտնական մոլլայից, որին ես պատահեցայ Գանձակի գաւառի Գետաշէն գիւղում: Միտս եկաւ՝ «գիրն սպանանէ—հոգին կեցուցանէ»:

(Կը շարունակուի):

Ե. Ծ.



ՃՐԱԳԱԼՈՒՑԻ ԵՐԵԿՈՅ.



Աւրա և մառախլապատ երեկոյ էր: Մի բարձրահասակ հիւանդոտ մարդ յենունով ձեռնափայտին՝ գանդաղ քայլերով անցնում էր Փարիզի Մաղարինի կոչուած փողոցով, Ծերունու հագուստը շատ քիչ էր պաշտպանում նրան սաստիկ քամուց. ամառուայ վարտիք մինչև վիզը կոճկուած հին բաճկոն և լայնաշուրթ գլխարկ, որ ծածկում էր ամբողջ երեսը—ասա այն ամենը, որ պատսպարում էր նրա նիհար մարմինը: Նրա ալեգարդ մագերը երկայն գանգուրներով թափուած էին ծոռուած ուսերի վերայ, Ծերունու ձեռքում կար դունաւոր թաշկինակի մէջ փաթաթած մի բան:

Նա անցաւ կամուրջը, Պառուսերի հրապարակը և հասնելով Պալէ—Ռոյալին՝ յանկարծ շուռ եկաւ՝ լուսոյ ալիքները և համեղ խորտիկների հոտը գրաւեցին նրա ուշադրութիւնը... Ապա տատանուելով հազիւ հազ հասաւ նա Ջորրուի հրապարակը, Այստեղ բարձրացնելով իւր գլուխը և տեսնելով լուսաւորութիւն ամեն մի պատուհանում, այդ աշխատողների փեթակում ուր կեանքը

ծննդեան տօների պատճառով ջրի նման եռ էր գալիս, նա կանգ առաւ երկայն բուլվարի ծայրում. ծերունիը տեղաւորուեց երկու պատերի մէջ, փայտը գրեց պատի մօտ և բացեց իւր թաշկինակը՝ թաշկինակի մէջ փաթաթած էր նրա ջութակը:

Համոզուելով, որ բոլոր լարերը ողջ են, ծերունին դողդոջուն մատներով կարգի բերեց, բայց լրսուեցին այնպիսի տխուր—տրտում հնչիւններ, անհարթ մեղեդիներ, որ մօտը կանգնող շարաճճի տղերքը կուշտ—կուշտ խնդալով և աղաղակ բարձրացնելով փախան, Մի շուն, որ մօտիկ նստած էր, սկսեց տխուր ձայնով ոռնալ, իսկ անցնող—գարձողները շտապում էին հեռանալ:

Ծերունին յուսահատ ընկաւ բուլվարի մոտքի առաջ. խիստ հառաչանքներ դուրս թռան նրա կրծքից. «Տէր Աստուած, միթէ ես էլ չեմ կարող նուագել»...:

Այդ իսկ ժամանակ երկայն, մութ բուլվարից—ծերունու կողմն էին գալիս երեք երիտասարդ ուսանող, ուրախ ուրախ մի նոր երգ երգելով, նրանք շնկատեցին ծերունուն՝ մէկը յանկարծ դիպաւ նրան, միւսը վայր ձգեց նրա գլխարկը, իսկ երրորդը զարմացած կանգնեց յանկարծ, իւր առաջ մի երկար չոր կմախք տեսնելով:

—Ներեցէք, խնդրեմ: Ես ցաւ չը տուի՛ արդեօք Ձեզ ասաց նա:

—Ոչ, պատասխանեց ջութակահարը, դժուարութեամբ թեքուելով, որ վերցնի գլխարկը: Բայց իսկոյն երիտասարդներից մէկը, վերցնելով գետնից գլխարկը և տալով ծերունուն, նկատեց նրա ջութակը:

—Դուք երաժիշտ էք:

—Երբեմն էի, յոգւոց հանեց ծերունիը, և արտասուքի երկու կաթիլ դրոշուեցան նրա կնճռոտ թշերի վերայ:

—Ի՞նչ է պատահել Ձեզ, հիւանդ էք. արդեօք չե՞նք կարող Ձեզ օգտակար լինել:

Ծերունիը նայեց նրանց վերայ և տարածելով գլխարկը—չնչաց:

—Ողորմութիւն արէք... Ես ոչինչ չեմ կարող վաստակել իմ նուագածութեամբ. մատերս կոշտացել են... իսկ իմ աղջիկը տանը մեռնում է թոքախտից, գուցէ և աղքատութիւնից: Ծերունու ձայնի մէջ լսուում էր այնքան վիշտայնքան տանջանք, որ երիտասարդները մի տեսակ սարսուռ զգացին և իսկոյն ձեռները գրպանները տանելով հանեցին՝ ինչ որ գրպաններում ունէին. մէկը 50 սանտիմ, միւսը—30, երրորդն էլ կանիֆօլի կտոր. ընդամենը 16 սու յօգուտ այդ սարսափելի չքա-

ւորութեան: Երիտասարդները տխուր հայեացքով միմեանց նայեցին . . .

— Ընկերներ, բացառանշէց նա, որ խօսում էր ձերունու հետ, փորձենք մեր ոյժերը: գուցէ Ագուլֆ առ նրա ջութակը ու նուագակցիր Գուստաւին. ես էլ կհաւաքեմ ինչ որ կը տան:

Ասելն ու անելն մէկ եղաւ. օձիքները բարձրացրին, մազերը թափեցին աչքերին, գլխարկները ծռեցին՝ «գէ՛հ, սկսե՛նք մեր գործը» ոգևորուեցէք և յափշտակուեցէք: Այս օր նախատօնակ է: Տէրը պէտք է մօտ լինի. Նրանից է հարկաւոր ստանալ առաջին մրցանակը: Ուրեմն, Ագուլֆ, սկսիր, որ լսողներ ժողովես:

Երիտասարդի ճարպիկ մատների տակ ձերուկի ջութակը ուրախալի կկկաց և Carnival de Venise-ի մեղեդիները հնչեցին հրաշալի, անմահ գեղեցկութեամբ: Ըրջակայ պատուհանները բացուած էին, անցնողները կանգ էին առնում: արծաթ փողերը թափուում էին չորս կողմից՝ ջութակը լսեց:

— Բո հերթն է, Գուստաւ, հրամայեց Շառլը. և իսկոյն լսուեց երիտասարդ տէնօրի գիլ և հիւանալի ձայնը . . . լսողները զմայլած, ոգևորութեամբ ծափահարում էին, ամենքը կանչում էին bis, bis, bis !

Ամբոխը մեծանում էր, փողը շատանում . . . Տեսնելով այդ յաջողութիւնը բարի գործի ձեռքերիցը առաջարկեց՝ «ընկերներ, վերջառանի տեղ կատարենք trio «Վիլհելմ Տէլից»: Գուցէ Ագուլֆ, կառնես բասի բաժինը, ես կկատարեմ բառիտօնի, իսկ դու Գուստաւ, իմ հրաշալի տէնօր, դու էլ մի փոքր քո երկնային ձայներն հնչեցրու, այն ժամանակ մեռածներն էլ կը կենդանանան»: Սկսեցին trio — և, մինչև այդ ժամանակ անշարժ կանգնած, ձերուկը չը կարողացաւ այլ ևս համբերել և բարձրացնելով իւր փայտը սկսեց այնպիսի մի ճարպիկութեամբ, յափշտակութեամբ կառավարել, որ ամբոխը արդէն առատ առատ վարձատրում էր նրան և փողով և գովասանքներով: Դրամները թռչում էին բոլոր պատուհաններից և զրպաններից և Շառլը գթութեամբ անում էր այդ բոլորը ձերունու գլխարկի մէջ ժողովելու:

Նուագահանգէսը վերջացաւ. ժողովուրդը սկսեց ցրուիլ քաղցր տպագրութեան տակ՝ ուրախ — ուրախ կատակներ անելով, Երիտասարդները շրջապատեցին ձերունուն, Իսկ նա ուրախութիւնից հագիւ կարողանում էր խօսել, չհաւատալով իւր տեսած ու լսածին:

— Զեր անունները ասացէք ինձ, ձեր անունները — ազնիւ, մեծահոգի երիտասարդներ:

— Իմ անունը, ասաց մէկը — Լ ա ա տ է:

— Իսկ իմը — Թ ո յ ս :

— Իսկ իմ անունը թող լինի Գ թ ու թ իւ ն, ասաց երրորդը գլխարկը վերադարձնելով ձերունուն:

Իմացէք, գոնէ նրա անունը. որին դուք այդպէս ազնիւ կերպով օգնեցիք, ես Հոպպէրն եմ: Էլ զասից, տասը տարի երաժշտական խմբի կառավարիչ եմ եղել ես Ստրասբուրգում: «Վիլհելմ Տէլի» րիչ եմ եղել ես Ստրասբուրգում: «Վիլհելմ Տէլի» առաջին ներկայացման ժամանակ նուագախմբի կառավարիչը ես էի: Անբաղդութիւնը, չքաւորութիւնը ինձ հալածում են հէնց այն օրից, երբ ես թողի հայրենիքս: Այժմ ձեր տաղանդի շնորհիւ ես միջոց կունենամ վերադառնալ իմ ծննդավայրը, և գուցէ հայրենի օդը կառողջացնէ աղջկանս, Իսկ ձեր տաղանդն ու շնորհը անհետ չեն կորչիլ, դուք կհռչակուիք և երեւելի մարդիկ կը դառնաք, ես այդ զգում եմ և գուշակում:

— Տայ Աստուած, ասացին երիտասարդները և հեռացան:

Հոպպէրի գուշակութիւնը կատարուեց, նրանք երեքն էլ հռչակուեցին և իրանց տաղանտի շնորհիւ անմահացան: Տէնօրը — հռչակաւոր Գուստաւ Ռօֆէն էր, ջութակահարը — Ագուլֆ Լէրմանը, իսկ ձեռներեցը — Փաուստ օպերայի հեղինակը Շառլ Գունտ:

(Լաֆոնտէնից)

Մ. Բ.



Մ Ա Ն Ե Ը Լ Ո Ւ Բ:

Պ ե տ ա կ ա ն խ ո թ Տ ր դ ի մ ի ո թ ղ ո լ մ ը. — Հոկտեմբերի 15-ին Պետական խորհրդով քննուել է լուսաւորութեան նախարարի առաջարկութիւնը՝ նախակրթական (начальное) դպրոցների ուսուցչի եւ ուսուցչուհու իրաւունք ձեռք բերելու յատուկ քննութիւններով մասին: Եղած օրէնսդրութեամբ (yet. elyab. prav. et. 155 priv.) որոշուած է. ա. քաղաքային նախակրթական ուսումնարանի ուսուցչի կողմից, բ. գիւղական նախակրթական ուսումնարանի ուսուցչի կողմից եւ գ. մասնաւոր նախակրթական ուսուցչի եւ ուսուցչուհու կողմից: Քաղաքային նախակրթական ուսումնարանի ուսուցչի կողմից ձեռք բերել ցանկացողից պահանջուում է գաւառական (yebnoe) ուսումնարանի դասընթացի քննութիւն, իսկ գիւղական նախակրթական ուսումնարանի ուսուցչի, ինչպէս եւ նախակրթական ուսուցչի եւ ուսուցչուհու իրաւունք ձեռք բերելու համար պահանջուում է նախակրթական ժողովրդական դպրոցի դասընթացի քննութիւն: Այժմ լուսաւորութեան մինիստրն առաջարկում է վերոյիշեալ երեք կողմաները միացնել եւ կոչել նախակրթական դպրոցի ուսուցչի եւ ուսուցչուհի, իսկ այդպիսի կողմից ձեռք բերելու համար պէտք է ցանկացողը գաւառական ուսումնարանի դասընթացի քննութիւն տայ, որով իրաւունք կստանայ նաեւ մասնաւոր դասեր տալու աներում:

Այդ առաջարկութեան նպատակն է տարրական ուսում